ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիս 2025 թվականի թիվ 172 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 213-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության փոխհատուցման ենթակա ծավալների, փոխհատուցման կարգի և փոխհատուցում ստացող սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 21-ի թիվ 271-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1444-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 2060-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 213-Ն որոշումները և ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 2060-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 213-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացված 549000.0 հազար դրամ գումարից 79328,4 հազար դրամը փոխանցել համայնքների անշարժ գույքի հարկի գանձապետական հաշվեհամարին՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Ա. Գևորգյանին՝ ապահովել որոշման կատարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-07-23 17:30:19 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2025 թ. հուլիս 23